ՀՈԴՎԱԾՆԵՐ

Գ. Կ ՕՐՋՈՆԻԿԻՁԵԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՍԱՄՎԵԼ ԱԼԻԽԱՆՅԱՆ

Կան անմոռաց, անմահ անուններ. թեև նրանք էլ ժամանակի հետ հեռանում են, բայց ժամանակի հետ գնալով մեծանում, ժամանակի հետ նորանում են։ Այդ անունների թվում, որոնցով այնքան հարուստ է մեր փառապանծ կուսակցության պատմությունը, մեզ համար թանկ է նաև վրաց ժողովրդի զավակ, պրոֆեսիոնալ հեղափոխական, կոմունիստական կուսակցության և սովետական պետության ականավոր գործիչ, Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտ ու զինակից Գեորգի (Սեռգո) Օրջոնիկիձեի անունը։

1918—1919 թթ., լինելով ՌՍՖՍՀ Ժողկոմսովետի արտակարգ կոմիսարը Ռուսաստանի հարավում, Գ. Օրջոնիկիձեն ուշադիր հետևում էր Անդրկովկասում իրադարձությունների զարգացմանը։ Նա Անդրկովկասի քաղաքական գրության մասին տագնապալից հեռագրեր էր հղում կոմունիստական կուսակցության Կենտկոմին և Վ. Ի. Լենինին։ «Անդրկովկասում տրամադրությունն ընկած է, բնակչությունն իր փրկությունը սպասում է բոլշևիկներից»,— գրել է նա Վ. Ի. Լենինին[1]։ Լիովին տեղյակ լինելով հայ ժողովրդի աղետալի վիճակին, Գ. Օրջոնիկիձեն հաճախակի զեկուցում էր Վ. Ի. Լենինին և օգնություն խնդրում նրանից։ 1918 թ. հոկտեմբերի 12-ին Վ. Ի. Լենինին ուղղած նրա հեռագրում կարդում ենք. «...Հայաստանի դրությունը ողբերգական է։ Երևանի նահանգի երկու գավառների մի փոքր հողակտորի վրա կուտակվել են ավելի քան 600.000 գաղթականներ, որոնք մասսայաբար կոտորվում են սովից ու համաճարակից։ Ղարաբաղում Շուշիի և Զանգեզուրի երկու գավառներն էլ թուրքերը գրավել են և բնակչությունը համառ դիմադրություն է ցույց տալիս... Հայ բնակչությունը օգնություն է սպասում Սովետական Ռուսաստանից»[2]։

1920 թ. Գ. Օրջոնիկիձեն ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նախագահն էր, ՌՍՖՍՀ-ի կառավարության լիազորը, կարմիր բանակի կովկասյան ռազմաճակատի ռազմահեղափոխական խորհրդի անդամը։ Նա միավորում և իրագործում էր կուսակցական, պետական ու ռազմական ղեկավարությունը Կովկասում։ Գ. Օրջոնիկիձեն անմիջականորեն ղեկավարել է Անդրկովկասում Սովետական իշխանության հաստատման և ամրապնդման գործը։

Մեծ է, շատ մեծ է Գ. Օրջոնիկիձեի դերը նաև Հայաստանում սովետական իշխանության հաստատման և ամրապնդման գործում։ 1920 թ. ապրիլի վերջին սովետական իշխանություն հաստատվեց Ադրբեջանում։ Սովետական Ռուսաստանի կարմիր բանակը մոտեցավ Հայաստանի սահմաններին։ Հայաստանի աշխատավորությունը, դժգոհ դաշնակցական կառավարության հակաազգային քաղաքականությունից, ոգեշնչված կարմիր բանակի հաղթանակներով և մոտ գտնվելուց, ապստամբություն բարձրացրեց, նպատակ ունենալով կարմիր բանակի օգնությամբ տապալել դաշնակցականների տիրապետությունը և հաստատել սովետական իշխանություն։ Բայց, դժբախտաբար, մայիսյան հերոսներին չվիճակվեց իրենց հեղափոխական սխրանքները հաղթանակով պսակել։ Չնայած ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն,

---

1 Г. К. Орджоникидзе, Статьи и речи, т. 1, М., 1956, с. 45.

2 *Նույն տեղում, էջ 45։*

11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհուրդը և նրա նախագահ Գ. Օրջոնիկիձեն մայիսյան հերոսներին ռազմական աջակցության փորձեր կատարեցին, բայց ուշ. օգնություն ցույց տալ ի վիճակի չեղան։ Մայիսյան ապըստամբության ծավալման մասին Արմենկոմի, Դիլիջանի և Իջևանի հեղկոմների հաղորդումներն ու խնդրագրերը ստանալով՝ Գ. Օրջոնիկիձեն անմիջապես զեկուցում էր ՌԿ(բ)Կ Կենտկոմին և Վ. Ի. Լենինին։ Մայիսի 22-ին Վ. Ի. Լենինին նրա հղած նամակում կարդում ենք. «Ամսի 10-ին Ալեքսանդրապոլում տեղական բանվորները, կայազորը և զրահագնացքը հռչակել են Հայկական Սովետական Հանրապետություն։ Սովետական իշխանությունը պահպանվել է 4 օր, որից հետո ապստամբությունը ճնշվել է։ Դիլիջանի շրջանից եկել են հայ ընկերները՝ խնդրում են աջակցել իրենց»[3]։ Մայիսի 23-ին Վ. Ի. Լենինին, Ի. Ստալինին և Գ. Չիչերինին Գ. Օրջոնիկիձեն հեռագրել է. «Քարվանսարայի համագումարի կողմից հաստատված է սովետական իշխանություն. հայկական կանոնավոր զորամասերից երկու գունդ անցել են ապստամբների կողմը։ Հեղկոմը դիմում է մեզ՝ օգնության համար։ Սպասում եմ Ձեր ճշգրիտ և շտապ պատասխանին»[4]։ Գ. Օրջոնիկիձեն իր նախաձեռնությամբ և անձնական պատասխանատվությամբ Դիլիջանի գավառի ապստամբներին օգնելու համար զորամասեր է առանձնացնում և ուղարկում։ 11-րդ բանակի հրամանատար Մ. Լևանդովսկուն նա գրում է. «Մեկ անգամ ևս Ձեր ուշադրությունն եմ հրավիրում հայ ապստամբներին օգնելու անհրաժեշտության վրա»[5]։

Սակայն Անտանտի նոր սկսած արշավանքը կլանեց կարմիր բանակի ուժերը. Սովետական Ռուսաստանի կառավարությունն իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրեց Անտանտի այդ արշավանքի վրա և Հայաստանի ապստամբ մասսաներին օգնել չկարողացավ։

Մայիսյան ժողովրդական հերոսական ապստամբության պարտությունից հետո Գ. Օրջոնիկիձեն ձեռք առավ հնարավոր բոլոր միջոցները՝ մայիսյան հերոսների կյանքը փրկելու, նրանց դաշնակցական կառավարության հալածանքներից ազատելու համար։ Այդ օրերին Հայաստանի իրադարձությունների մասին նա մանրամասնորեն տեղեկացնում է Վ. Ի. Լենինին և խնդրում դիվանագիտական ճանապարհով ճնշում գործադրել դաշնակցական կառավարության վրա՝ ձերբակալված կոմունիստներին ու ապստամբ գյուղացիներին մահապատժից ազատելու համար։ Գ. Օրջոնիկիձեն 1920 թ. հունիսի 5-ին Վ. Ի. Լենինին ներկայացնում է մի զեկուցագիր, որտեղ նկարագրում է այդ հերոսական ապստամբությունը։ «Սկսած մայիսի 1-ից,— գրում է նա,— բացառապես ՌԿ(բ)Կ կոմունիստական կազմակերպությունների լոզունգներով Հայաստանում բանվորագյուղացիական մասսաների առաջ ծառացավ իշխանության հարցը»։ Այս զեկուցագրում ցույց է տրվում, որ «ամբողջ Հայաստանը բռնված է ապստամբության կրակով»[6]։

Գ. Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի և Բ. Լեգրանի նախաձեռնությամբ 1920 թ. հունիս-օգոստոս ամիսներին դաշնակցական կառավարության հետ մի շարք բանակցություններ վարվեցին բանտարկված կոմունիստներին Սովետական Ռուսաստանում և Ադրբեջանում բանտարկված դաշնակցականների հետ փոխանակելու ուղղությամբ։ Սովետական կառավարությունը մի շարք նոտաներ ուղղեց դաշնակցական կառավարությանը, որոնցով պահանջում էր դադարեցնել կոմունիստների գնդակահարությունները և ապստամբների ու նրանց ընտանիքների նկատմամբ մաուզերիստների կողմից գործադրվող գազանությունները։ Վերջապես, Գ. Օրջոնիկիձեի անձնական մասնակցությամբ էր, որ հաջողվեց Դիլիջանի, Իջևանի և Շամշադինի շրջանների ավելի քան 1200

---

[3] Центральный государственный архив Октябрьской революции, ф. 130. оп. 4, д. 496, л. 72.

[4] Նույն տեղում։

[5] «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Երևան, 1960, էջ 345—346։

[6] Г. К. Орджоникидзе, Статьи и речи, т. 1, с. 113.

սեպտեմբերների Ղազախի վրայով փոխադրել Բաքու։ Նրանցից հետագայում կազմվեց Հայկական հատուկ գունդ, որը Հայաստանի Հեղկոմի ռազմական հենարանը դարձավ։

1920 թ. ամբողջ ամռան և աշնան ընթացքում Սովետական Ռուսաստանի կառավարությունը բանակցություններ էր վարում Հայաստանի դաշնակցական կառավարության հետ՝ նպատակ ունենալով Հայաստանը դուրս բերել Անտանտի ճիրաններից և հայ ժողովրդին փրկել Թուրքիայի հոշոտումից։ Գ. Օրջոնիկիձեն, որպես ՌՍՖՍՀ պետական լիազոր, գտնվում էր այդ բանակցությունների կենտրոնում։ Ս. Կիրովի և Բ. Լեգրանի հետ միասին նա ամեն ինչ անում էր, որպեսզի հայ ժողովուրդը կրկին չենթարկվեր թուրքական մահաբեր հարձակմանը։ Պահպանված փաստաթղթերը վառ կերպով վկայում են, որ Գ. Օրջոնիկիձեն Հայաստանին վերաբերող բանակցությունների ժամանակ հանդես է բերել մեծ քաղաքագետի հմտություն և իմաստություն, համակովկասյան և անդրկովկասյան գործերի լիակատար իրազեկություն, ազգամիջյան խռովությունների վերացման և վիճելի հարցերի լուծման մեջ ազնիվ անկողմնակալություն, որը բխում էր հարևան ժողովուրդների միջև արդարացի հաշտության կնքման և կայուն խաղաղության ու համագործակցության հաստատման լենինյան սկզբունքից։

1920 թ. սեպտեմբերին Թուրքիան նվաճողական արշավանք սկսեց Հայաստանի դեմ։ Հայ ժողովուրդը կանգնեց նոր կոտորածների սպառնալիքի առջև։ Հայաստանի կոմկուսի Կենտկոմը, Գ. Օրջոնիկիձեն և Բ. Լեգրանը գտնում էին, որ պատերազմին վերջ տալու, Հայաստանը Թուրքիայի կողմից լրիվ նվաճելու վտանգը կանխելու միակ միջոցը Հայաստանում սովետական իշխանության հաստատումն է։ Այդ դեպքում Հայաստանի սովետական կառավարությունը դաշինքի մեջ կմտներ Սովետական Ռուսաստանի հետ և դրանով Թուրքիային կհարկադրեր դադարեցնել հարձակումը։ Հոկտեմբերի սկզբին ՀԿԿ Կենտկոմը, Գ. Օրջոնիկիձեն և Բ. Լեգրանն այդ ոգով մի շարք զեկուցագրեր ու հեռագրեր են ուղարկում ՌԿ(բ)Կ Կենտկոմին և Վ. Ի. Լենինին։ 1920 թ. հոկտեմբերի սկզբին, Գ. Չիչերինը, հենվելով Հայաստանի կոմկուսի Կենտկոմի դիմումների, Գ. Օրջոնիկիձեի և Բ. Լեգրանի զեկուցագրերի վրա, ՌԿ(բ)Կ Կենտկոմին և Վ. Ի. Լենինին հղում է քաղբյուրոյի որոշման երեք կետից բաղկացած նախագիծը՝ Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու վերաբերյալ. 1. համաձայնել ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի կարծիքի հետ՝ Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու մասին, 2. քաղաքական օգնություն ցույց տալ նրան՝ թուրքերի հետագա առաջխաղացումը կասեցնելու համար, 3. պաշտպանել սովետական նոր կառավարությանը[7]։ 1920 թ. հոկտեմբերի 13-ին Վ. Ի. Լենինը քաղբյուրոյին գրել է. «Քաղբյուրոյին առաջարկում եմ հաստատել Չիչերինի բոլոր երեք առաջարկները։ Քաղբյուրոն 1920 թվականի հոկտեմբերի 14-ին հաստատում է Չիչերինի ներկայացրած որոշման նախագիծը[8]։ Այդ որոշումը դարձավ Հայաստանում սովետական իշխանության համար մղված պայքարի ծրագիրը։

1920 թ. հոկտեմբեր-նոյեմբերին Գ. Օրջոնիկիձեն ՌԿ(բ)Կ Կենտկոմին և Վ. Ի. Լենինին սիստեմատիկորեն հեռագրում էր հայ ժողովրդի և Հայաստանում սովետական իշխանության հաստատման անհետաձգելի անհրաժեշտության մասին՝ որպես հայ ժողովրդի փրկության միակ ելքի։ Հեռագրերում ցույց էր տրվում, թե ինչպես քեմալականների հետ գործարքի մեջ մտնելով՝ դաշնակցական կառավարությունը ձգտում էր հայ ժողովրդի շահերի վաճառքի հաշվին պահպանել իր տիրապետությունը Կարս-Բեյազետ փաշայի գծած մի պատառ Հայաստանի սահմաններում։ 1920 թ. նոյեմբերի 4-ին և 9-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն քննարկում է Հայաստանում սովետական իշխանության հաստատման հարցը և ընդունում որոշումներ, որոնք նպատակ

---

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 44, էջ 634—635։

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 44, էջ 486։

ունեին արագացնել Հայաստանում սովետական իշխանության հաստատումը և այդ միջոցով կանխել քեմալականների ու դաշնակցականների սև գործարքը[9]։ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը Գ. Օրջոնիկիձեի աջակցությամբ նախապատրաստական լայն աշխատանք է ծավալում Հայաստանի աշխատավորության շրջանում։ 1920 թ. նոյեմբերի 11-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն Հայաստանում սովետական իշխանության համար ծավալված պայքարն ավելի հաջող վարելու և հաղթանակով պսակելու նպատակով ՀԿԿ Կենտկոմի կազմը լրացնում է երեք անդամով՝ Ս.Կասյան, Ա. Բեգզադյան և Ս. Տեր-Գաբրիելյան։ Այսպիսով, Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի կազմի մեջ մտնում էին Ս. Կասյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ա. Բեգզադյանը, Հ. Կոստանյանը, Ա. Նուրիջանյանը, Ի. Դովլաթյանը, Ա. Խանջյանը և Շ. Ամիրխանյանը։ ՀԿԿ Կենտկոմը Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ է առաջադրում Ս. Կասյանին, անդամներ՝ Ա. Մռավյանին, Ս. Տեր-Գաբրիելյանին, Ի. Դովլաթյանին, Ա. Բեգզադյանին և Ա. Նուրիջանյանին։

Նոյեմբերի 15-ին Ի. Ստալինը Բաքվից տրված հեռագրով Վ. Ի. Լենինին ծանոթացնում է Կովկասի և Մերձավոր արևելքի ռազմաքաղաքական իրավիճակին։ Այստեղ Հայաստանի մասին նա նշում է հետևյալը. «Հնարավոր է, որ Հայաստանի հաշվում արդեն ուշացել ենք, այսինքն՝ մինչև մեր հասնելը Բեմալը նրան կուլ կտա»[10]։ Ելնելով Հայաստանում տիրող օրհասական դրությունից, նոյեմբերի 15-ից 22-ը ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն և ՀԿԿ Կենտկոմը մի շարք նիստերում և խորհրդակցություններում քննարկում են Հայաստանում սովետական իշխանության հաստատման հետ կապված բոլոր հարցերը։ Նոյեմբերի 22-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն ՀԿԿ և ԱԿԿ Կենտկոմների անդամների հետ անդրադառնում է Հայաստանում անհապաղ սովետական իշխանություն հաստատելու հարցին և որոշում է ընդունում հարցը տեղափոխել ՌԿ(բ)Կ Կենտկոմ։ Նոյեմբերի 23-ին Գ. Օրջոնիկիձեն ուղիղ գծով կապվում է Վլադիկավկազում (Օրջոնիկիձե) գտնվող Ի. Ստալինի հետ։ Հաղորդում ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի որոշումը և թույլտվություն խնդրում ՌԿ(բ)Կ Կենտկոմից ու անձամբ Վ. Ի. Լենինից։ «Ներեկ,— ասում է Գ. Օրջոնիկիձեն,— հարցը քննարկեցինք Հայաստանի Կենտկոմի և ընկեր Նարիմանովի հետ։ Մեր կարծիքն է՝ այլևս չսպասել և խրվել սեպաձև»[11]։ Միաժամանակ Գ. Օրջոնիկիձեն Ի. Ստալինին հաղորդում է Բ. Մդիվանուց ստացած ծածկագիրը՝ Թուրքիայի և Անտանտի ներկայացուցիչների գաղտնի բանակցությունների ու մենշևիկյան Վրաստանի հետ ենթադրվող համաձայնության մասին այն դեպքում, եթե Թուրքիան հարձակվի Սովետական Ադրբեջանի վրա։ Ելնելով այդ հանգամանքներից, Գ. Օրջոնիկիձեն նախագծում էր Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու միջոցով Թուրքիային հարկադրել դադարեցնելու ագրեսիվ գործողությունները Հայաստանում, կանխել Սովետական Ադրբեջանի դեմ ուղղված՝ քեմալականների դաշինքը մենշևիկյան Վրաստանի հետ, ձախողել Քեմալին Անդրկովկասի դեմ գրգռելու, այսինքն՝ ՌՍՖՍՀ-ի հետ պատերազմական կոնֆլիկտի մեջ քաշելու Անտանտի գործողությունները։ Ի. Ստալինը, համաձայնելով Գ. Օրջոնիկիձեի նկատառումներին, այնուամենայնիվ, վաղաժամ է համարում «սեպաձև խրվելը» քանի դեռ, ինչպես ասում էր նա, ռազմական օժանդակ ուժերը տեղ չեն հասել և Երևան ուղարկված զորամասերը շտապողականության պատճառով կարող են ծուղակն ընկնել, որը և վտանգավոր հետևանք կարող է ունենալ։ Բացի այդ, Վրաստանի մենշևիկյան կառավարությունը գնացքներ բաց չի թողնի Հայաստան, իսկ Աղստա-

---

9 Центральный партийный архив Институт марксизма-ленинизма при ЦК КПСС (далее ЦПА ИМЛ), ф. 3, оп. 1, д. 1996, л. 1—6.

10 Նույն տեղում, գ. 1999, թ. 1։

11 Նույն տեղում, գ. 2004, թ. 2։

Գ.-Երևան խճուղին անբավարար կլինի հաց և այլ պարենամթերքներ փոխադրելու համար։ Այս վերջինին Ի. Ստալինը վճռական նշանակություն էր տալիս. խոսակցության ժամանակ նա մի քանի անգամ անդրադառնում է Հայաստանի և այնտեղ գտնվելիք զորամասերի պարենավորման հարցին։ Ի. Ստալինի կարծիքով, միայն հացի պահանջը ամսական կկազմեր առնվազն 2000 փութ, որի փոխադրումը խճուղով անհնարին կդառնար։ Նա հնարավոր էր համարում մենշևիկյան Վրաստանի ու Թուրքիայի դաշինքը և Ադրբեջանի վրա նրանց միացյալ հարձակումը և այդ պատճառով էլ առաջարկում էր առաջին հերթին հարվածել մենշևիկյան Վրաստանին, այնտեղ հաստատել սովետական իշխանություն, բացել երկաթգիծը դեպի Հայաստան և ապա անմիջապես «խրվել սեպաձև»։ Նրա կարծիքով միայն այդ դեպքում կհեշտացվեր Սովետական Հայաստանին ռազմատնտեսական օգնություն ցույց տալը։

Սակայն իրադարձությունների անբարենպաստ զարգացման հետևանքով Հայաստանում սովետական իշխանության հաստատման ամեն մի ձգձգում հայ ժողովրդի դոյությունը դնում էր սպառնալիքի տակ։ Գ. Օրջոնիկիձեի հետ ունեցած այդ խոսակցության ժամանակ Ի. Ստալինն ասում է. «Եթե դու, այնուամենայնիվ, պետք է գնդես, ես այսօր կխոսեմ Կենտկոմի հետ և սանկցիա կպահանջեմ քո առաջարկության ոգով։ Նկատի ունեցիր,— նախազգուշացնում էր նա,— որ մեր տրամադրության տակ չկա ոչ մի ռազմական և երկաթուղային ճանապարհ, բացի Աղստաֆա-Դիլիջան խճուղուց. դրա հետևանքով մեր զորքերը կարող են գտնվել անբարենպաստ պայմաններում. ինչպես ստրատեգիական տեսակետից, այնպես էլ մատակարարման իմաստով»[12]։ Գ. Օրջոնիկիձեն, համաձայնելով Ի. Ստալինի դատողություններին, պատասխանում է. «Քո թվարկած բոլոր դժվարությունները և երկաթուղու բացակայությունը ճիշտ են, բայց այդ դժվարությունները հետագայում կարող են ավելի վատթարանալ, եթե Դիլիջանը գրավվի Թուրքերի կողմից։ Ղարաքիլիսան նրանց կողմից արդեն գրավվում է, հայկական բանակ այլևս գոյություն չունի, բնակչության տրամադրությունները, կարծում եմ, չեմ սխալվի, եթե ասեմ, որ ավելի շատ մեր կողմն են, քան որևէ ուրիշ մեկի կողմը։ Ղազախի շրջանում հայ գինվորները, տպաները և բնակչությունը դիմում են մեզ, (խնդրելով) ցույց տալ, թե ինչ անեն իրենք։ Մեր կողմից սպասողականությունը հայ ժողովրդի մեջ կըստեղծի այն տպավորությունը, որ մենք էլ ենք լքել նրան, թողնելով բախտի քմահաճույքին»[13]։ Նա Ի. Ստալինից խնդրում է Կենտկոմի առաջ պնդել՝ արագացնելու հայ ժողովրդին օգնություն ցույց տալու համար օժանդակ զորամասերի փոխադրումը, զինամթերքի, հատկապես հագուստի առաքումը։ Իրեն հատուկ կրքոտությամբ Գ. Օրջոնիկիձեն հայտարարում է. «այդ պայմանով երաշխավորում եմ, որ բոլոր ուղղությունների գործողություններն էլ կավարտվեն հաջողությամբ, թեև այս շատ համարձակ է»[14]։

Ի. Ստալինն անմիջապես ուղիղ գծով Վ. Ի. Լենինին հայտնում է այն մասին, որ հայերն այլևս բանակ չունեն և Թուրքերը ցանկության դեպքում կարող են առանց դժվարության գրավել ամբողջ Հայաստանը, որ Թիֆլիսում Մ. Քեմալի ներկայացուցիչ Քյազիմ բեյն իրեն պահում է չափազանց կասկածելի, որ համաձայն Բ. Մդիվանու՝ Հայաստանի օկուպացումը Թուրքիայի կողմից տեղի է ունենում մենշևիկյան Վրաստանի գիտությամբ և որ Թուրքերը հենց այժմ կապեր են հաստատում Ադրբեջանի դժգոհ տարրերի հետ, ձգտում են Ադրբեջանի հետ ունենալ ընդհանուր սահման, որը հատկապես վտանգավոր է այժմ։ «Երեկ Զեղ հանձնված Թուրքական կառավարության նոտան (միջնորդության վերաբերյալ մեր նոտայի պատասխանը) խոսում է Թուրքերի չափազանց խուսափողական դիրքի մասին»,—ասում է նա։ Ի. Ստալինը միաժամանակ հայտնում է, որ Անգլիան զորքեր է կուտակում Իրանում և նախապատրաստվում շարժվել Էնզելիի և Ռեշտի վրա։ Ընդհանրացնելով այս ամենը, նա ասում է.

---

12 Նույն տեղում, թ. 5։

13 Նույն տեղում։

14 Նույն տեղում, թ. 10։

«Օրջոնիկիձեն մտածում է, որ Կովկասում... մենք կանգնած ենք կովկասյան մեծ պատերազմի առջև, որը Անգլիան նախապատրաստում է Վրաստանի միջոցով, Թուրքերի շեղոքությամբ՝ լավագույն դեպքում, իսկ վատագույն՝ Թուրքերի հետ դաշնակցած մեր դեմ, նախ և առաջ բոլշևիկյան Ադրբեջանի դեմ. սրանում ես Օրջոնիկիձեի հետ միանգամայն համաձայն եմ»[15]։ Վ. Ի. Լենինն անմիջապես հայտնում է Ի. Ստալինին. «Առանց քաղբյուրո գումարելու ես չեմ կարող ոչ մի պատասխան տալ։ Խորհուրդ եմ տալիս Ձեզ իսկույնևեթ կոնկրետ առաջարկություն մտցնել և անհապաղ դնել քաղբյուրոյում, կամ ինքներդ գործեցեք Ստալինի ունեցած լիազորությունների ճիշտ հիման վրա, կամ, կերջապես, արագացրեք Ձեր գալը Մոսկվա՝ կովկասյան հարցը ամբողջությամբ լուծելու համար։ Համենայնդեպս անհրաժեշտ է ուժեղացնել ու արագացնել օգնական ուժերի մոտեցումը, և հաղորդեցեք, թե որն է հատկապես Ձեր որոշումը»[16]։ Ի. Ստալինը պատասխանում է հետևյալը. «Այսօր գիշերը մեկնում եմ Մոսկվա։ Օրջոնիկիձեին կարգադրություն եմ անում նախապատրաստական աշխատանք կատարել և սպասել ցուցումների Մոսկվայից։ Իսղմաճակատի հետ կխոսեմ սեղափոխությունն արագացնելու մասին»[17]։ Ի. Ստալինն անմիջապես հեռագրական ապարատի մոտ է կանչում Գ. Օրջոնիկիձեին և ասում. «Հենց նոր խոսեցի Լենինի հետ. նա խնդրեց արագացնել իմ մեկնումը Մոսկվա։ Ես մեկնում եմ այսօր։ Մի երեք օրից կստանաս դիրեկտիվ։ Առայժմ որոշված է տանել նախապատրաստական աշխատանք քո առաջարկության ոգով և արագացնել նոր համալրումների փոխադրումը, ինչ գնով էլ լինի»[18]։

Նոյեմբերի 24-ին Գ. Օրջոնիկիձեն ՌԿ(բ)Կ Կենտկոմին դարձյալ հեռագրում է. «Հայ ընկերների և ընկեր Նարիմանովի կարծիքով այլևս չպետք է սպասել։ Թուրքերը, ըստ երևույթին, ձգտում են հաշիվ տեսնել հայերի հետ և ցանկանում են ունենալ անկաշկանդ ձեռքեր։ Դաշնակցականները, անկասկած, կորցրել են ամեն մի հեղինակություն, դա երևում է Լեգրանի հաղորդումներից։ Մեր անվերջ սպասողական դրությունը հայ մատաղներին վերջնականորեն կհասցնի բոլորի կողմից լքվածի դրության, իսկ այժմ նույնիսկ «Մշակն» է սպասում մեր գալստյանը։ Առավոտյան ուղարկում եմ ընկերներին»[19]։ Նոյեմբերի 25-ին հատուկ գնացքով Բաքվից Ղազախ են մեկնում Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի Արտասահմանյան բյուրոյի և Հայաստանի հեղկոմի անդամները՝ կուսակցական ակտիվի հետ միասին։ ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն Գ. Օրջոնիկիձեի նախաձեռնությամբ որոշում է հայ ժողովրդին օգնելու և Հայաստանում սովետական իշխանության հաստատման հետ կապված գործողությունները սկսել նոյեմբերի 28-ի գիշերը։ Այդ մասին ՌԿ(բ)Կ Կենտկոմին հղած հեռագրում Գ. Օրջոնիկիձեն գրում է. «Վաղը Կասյանը սկսում է»[20]։

ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն նոյեմբերի 27-ին Վ. Ի. Լենինի նախագահությամբ քննում է Կովկասի քաղաքական դրության հարցը[21]։ Այդ օրերին քաղբյուրոն Հայաստանում սովետական իշխանության հաստատման հարցին անդրադառնում է մի քանի անգամ։ Նկատի ունենալով Հայաստանում ստեղծված հեղափոխական իրադրությունը և դաշնակցականների տիրապետության լիակատար քայքայումը՝ զինված գործողություններից և ավելորդ արյունահեղությունից խուսափելու նպատակով Կենտկոմն արտաքին գործերի ժողկոմատին ցուցում է տալիս շարունակել բանակցությունները դաշնակցական կառավարության հետ՝ իշխանությունը խաղաղ ճանապարհով հանձնելու մասին։

---

15 Նույն տեղում։

16 Վ. Ի. Լենին, երկ, հ. 52, էջ 15—16։

17 ЦПА ИМЛ, ф. 3, оп. 1, д. 2004, л. 12.

18 Նույն տեղում։

19 Նույն տեղում, ֆ. 85, ց. 14, գ. 30, թ. 31։

20 Նույն տեղում, գ. 22, թ. 2։

21 Վ. Ի. Լենին, երկ, հ. 42, էջ 56—57։

ՌՍՖՍՀ-ի՝ Հայաստանի լիազոր Բ. Լեգրանը, ղեկավարվելով Կենտկոմի ցուցումներով, Երևանում շարունակում էր բանակցություններ դաշնակցական կառավարության հետ։ Դաշնակցականներն այդ օրերին միաժամանակ Ա. Խատիսովի միջոցով բանակցում էին Կարա-Բեքիրի հետ՝ ընդդեմ հայ ժողովրդի, հանուն իրենց իշխանության պահպանման։ Դաշնակցականներն ամեն կերպ աշխատում էին քեմալականների հետ համաձայնության գալ և Թուրքական սվիններով խեղդել հեղափոխական շարժումը Հայաստանում։ Այդ պատճառով բանակցությունները Բ. Լեգրանի հետ ձգձգվում էին։ Դաշնակցական կուսակցության օրգան «Հառաջը» նոյեմբերի 20-ին իր առաջաբանում գրում էր. «Իր փրկության համար Հայաստանը ունի միայն մի ճանապարհ, անմիջական կերպով մի ընդհանուր լեզու գտնել հարևանի՝ Թուրքի հետ»։

Նոյեմբերի 28-ին, ավարտելով ռազմաքաղաքական բոլոր նախապատրաստությունները, Հայաստանի հեղկոմը նոյեմբերի 29-ի վաղ առավոտյան հայկական հատուկ գնդի գլուխն անցած Ղազախից շարժվում է Իջևան։ Գ. Օրջոնիկիձեն, որը հետևում էր Հեղկոմի և կարմիր բանակի զորամասերի գործողություններին, ՌԿ(բ)Կ Կենտկոմին նոյեմբերի 29-ին հայտնում է, որ Հայաստանի Հեղկոմը Իջևանի և Դիլիջանի շրջանների ապստամբ գյուղացիներից մասսայական դիմումներ ստանալով օգնություն ցույց տալու մասին՝ ինքնուրույն անցել է սահմանը և շարունակում է շարժվել դեպի Դիլիջան։ Գ. Օրջոնիկիձեն Բ. Լեգրանին հեռագիր է հղում, որտեղ նշում է, թե ինչպիսի ցնծությամբ է դիմավորել Իջևանի ապստամբ բնակչությունը Հայաստանի հեղկոմին և առաջարկում է ձեռնարկել բոլոր միջոցները, որպեսզի դաշնակցականները խաղաղ ճանապարհով հեռանան իշխանությունից ու դիմադրելու փորձեր չանեն[22]։ Նա Հեղկոմի շարժումն անվտանգ դարձնելու նպատակով 11-րդ բանակի շտաբին ցուցում է տալիս կենտրոնացնելու անհրաժեշտ օգնական ուժեր՝ դաշնակցականների դիմադրության փորձերը ջախջախելու համար։

Հայաստանի հեղկոմի զորամասերն առանց որևէ լուրջ դիմադրության հանդիպելու նոյեմբերի 29-ին մտնում են Իջևան։ Բնակչությունը նրանց ցնծությամբ է դիմավորում։ Իջևանում Հայաստանի հեղկոմը այդ նույն օրը Հայաստանը հռչակում է Սովետական Սոցիալիստական Հանրապետություն և Սովետական Ռուսաստանից խնդրում ցույց տալ ռազմական աջակցություն՝ դաշնակցականների անարգ լուծը տապալելու գործում և միջնորդ հանդիսանալ հայ-Թուրքական հարաբերությունները կարգավորելու հարցում։

Հայաստանի հեղափոխական մասսաների կանչով Հայաստանի հեղկոմի սահմանն անցնելու և դեպի Դիլիջան շարժվելու վերաբերյալ Գ. Օրջոնիկիձեի նոյեմբերի 29-ի հաղորդումը քննարկվում է ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյում[23]։ Վ. Ի. Լենինն այդ օրերին ամենայն ուշադրությամբ հետևում էր Հայաստանում կատարվող դեպքերի զարգացմանը։ Կենտկոմը նրա հանձնարարությամբ Գ. Օրջոնիկիձեից պահանջում է օրական երկու անգամ տեղեկություն տալ Հայաստանի հեղկոմի գործողությունների մասին և արագացնել կարմիր բանակի մուտքը Ղարաքիլիսա (Կիրովական)։ Ի. Ստալինի նոյեմբերի 30-ի հեռագրում ասված է. «Անմիջապես տեղեկություն տուր, թե որտեղ են հասել ապստամբները... պետք է արագացնել Ղարաքիլիսայի գրավումը, առանց որի Երևանի հարցը կմնա թերի»[24]։ Գ. Օրջոնիկիձեն նոյեմբերի 30-ին, կապվելով հենց նոր Իջևան հասած Հեղկոմի հետ, ապարատի մոտ է կանչում կարմիր բանակի զորամասերի հրամանատար Մ. Վելիկանովին և ցուցումներ տալիս հետագա շարժման մասին։ Նա մասնավորապես կարգադրում է Դիլիջան հասնելուն պես բաժանվել երկու շարասյան. մեկը հեղկոմի հետ պետք է շարժվեր Երևան, իսկ մյուսը՝ Ղարաքիլիսա։ Այն անհրաժեշտ էր շտապ գրավել՝ Թուրքերին կանխելու համար։ Գ. Օրջոնիկիձեն հայտնում է նաև հետև-

22 ЦПА ИМЛ, ф. 85, оп. 14, д. 33, л. 3.

23 Նույն տեղում, գ. 22, թ. 11—12։

24 Նույն տեղում, հ. 9, գ. 1, գ. 2204, թ. 1։

եք ոչ թե նվաճված երկրում, այլ երկրում, որտեղ դուք աղատաղրում եք բանվորներին և գյուղացիներին։ Հրամանն այս ձևով հաղորդեցեք իմ անունից»[25]։ Բացի այդ, նա Մ. Վելիկանովից պահանջում է բոլոր հարցերում ենթարկվել յատրվի ինքնակամության ոչ մի դեպք. նկատի ունեցեք, որ դուք գտնվում յալը. «Զմոռանաք իմ նախկին խնդրանքս, որպեսզի զորքերի կողմից չթույլ-Հայաստանի հեղկոմին և գործել նրա ցուցումներին համապատասխան։ Գ. Օրջոնիկիձեն նոյեմբերի 30ին կրկին կապվում է Իջևանում գտնվող Վելիկանովի հետ՝ իմանալու իրադրությունը։ Մ. Վելիկանովը զեկուցում է, որ Հեղկոմը և զորքերը գտնվում են Ջարխեչում, որ Սեպուհի ուղարկած ջոկատը, որը բաղկացած է 400 հոգուց, 10 սպայով և գնդապետի հրամանատարությամբ, առանց դիմադրության հանձնվել է կարմիր զորամասերին։ Նա Գ. Օրջոնիկիձեին հաղորդում է Հեղկոմի խնդրանքը՝ Ղազախի վրայով շտաս-հաց ու նավթ փոխադրելու և հայ կոմունիստ աշխատողներ ուղարկելու մասին։ Գործերի հաջող ընթացքով ուրախացած Գ. Օրջոնիկիձեն ողջունում է Հայաստանի հեղկոմին։ «Շնորհավորում եմ։ Բոլորը կկատարվի։ Խնդրում եմ՝ Ձեզ՝ չդիմել ոչ մի ռեպրեսիայի և ընդհանրապես լինել վերին աստիճանի զգույշ... էլի եմ խնդրում լինել զգույշ, միլիոն անգամ զգույշ։ Ամուր համբուրում եմ Ձեզ բոլորիդ»[26]։ Նա այնուհետև մի քանի անգամ կապվում է Դիլիջանում գտնվող Հեղկոմի հետ և Ս. Կասյանին ցուցումներ տալիս Հեղկոմի ու զորամասերի հետագա շարժման վերաբերյալ։ Երբ Հայաստանի հեղկոմը մտնում էր Դիլիջան, այնտեղից արդեն Սեպուհը փախել էր, իսկ նրա ուղարկած զորամասերը դիմադրելու փոխարեն գրկախառնվել էին կարմիրբանակայիների հետ։

Դաշնակցականների՝ բոլոր «բարեկամներից» լքված կառավարությունը կանգնում է կատարված փաստի առջև։ Նա այլևս դիմադրելու ուժ չուներ և Ս. Վրացյանի նորածին կառավարությունը դեկտեմբերի 2-ին ՌՍՖՍՀ-ի լիազոր Բ. Լեգրանի հետ ստորագրում է իշխանությունից հրաժարվելու համաձայնագիրը, որն ապստամբ ժողովրդի կամքի առաջ դաշնակցականների կապիտուլյացիայի ակտն էր։ Դեկտեմբերի 3-ին, կապվելով Դիլիջանում գտնվող Հայաստանի հեղկոմի հետ, Գ. Օրջոնիկիձեն, ելնելով Բ. Լեգրանի կնքած համաձայնագրից, նրան ցուցում է տալիս անհապաղ մեկնել Երևան։ Միաժամանակ Գ. Օրջոնիկիձեն Վ. Ի. Լենինին հասցեագրած հեռագրում հայտնում էր. «Հենց նոր Երևանից ստացվեց հաղորդում. հին կառավարությունը տապալված է, ամբողջ իշխանությունը մինչև Հեղկոմի ժամանումը հանձնված է զինվորական հրամանատարությանը, Հեղկոմը այժմ Դիլիջանումն է։

Եվ այդպես, էլի մեկ հանրապետություն։

Կեցցե Հայաստանի Սովետական հանրապետությունը»[27]։

Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի լուրը ստանալուն պես ՌԿ(բ)Կ Կենտկոմը և Ժողկոմսովետը ձեռնարկում են արտակարգ միջոցներ՝ Սովետական Հայաստանին տնտեսական, ռազմական և դիվանագիտական օգնություն ցույց տալու ուղղությամբ։ Անմիջապես կարգադրություն է արվում 11-րդ բանակի ֆոնդից Հայաստանին հատկացնել 50 վագոն հացահատիկ։ Գ. Օրջոնիկիձեն միջոցներ է ձեռնարկում, որպեսզի հացը շուտափույթ տեղափոխվի Երևան։ Դեկտեմբերի 2-ին նա Վրաստանում ՌՍՖՍՀ-ի լիազոր Շեյմանին գրում է. «Զափազանց անհրաժեշտ է Վրաստանի վրայով տրանզիտի իրավունք ստանալ դեպի Հայաստան։ Խնդրում եմ այդ հարցը դնել վրացական կառավարության առջև։ Ինչքան հնարավոր է շուտ պատրաստել երկաթգիծը։ Տրանզիտից պետք է օգտվենք հացը Հայաստան փոխադրելու համար»[28]։ 1920 թ. դեկտեմբերի 7-ին Գ. Օրջոնիկիձեն, Հայաստանի հեղկոմին տեղեկացնելով ՌԿ(բ)Կ Կենտկոմի և Ժողկոմսովետի ձեռնարկած միջոց-

25 Նույն տեղում, ֆ. 85, ց. 14, գ. 35, թ. 5։

26 Նույն տեղում։

27 Նույն տեղում, գ. 33, թ. 3։

28 Նույն տեղում, գ. 39, թ. 7։

ների մասին, հայտարարում է. «Թող Հայաստանի բանվորներն ու գյուղացիներն իմանան, որ Սովետական Ռուսաստանի բոլոր ուժերն ու եռանդն ի սպաս կդրվեն Սովետական Հայաստանին։ Թող իմանան, որ Ռուսաստանի բանվորները, գյուղացիները և կարմիր բանակը կբաժանեն հացի իրենց համեստ պահուստը Հայաստանի բանվորների և գյուղացիների հետ»։ Դիմելով ՀԿԿ Կենտկոմի և Հայաստանի Հեղկոմի անդամներին, Գ. Օրջոնիկիձեն գրում է. «Ամբողջ ուժով և հավատով անցեք հոշոտված Հայաստանի աղատագրման սրբազան գործին։ Ամուր սեղմում եմ ձեռքներդ։

Ձեր Սերգո»[29]։

Հացով ու նավթով բարձված առաջին գնացքի մուտքը Երևան մեծ ցնծություն է առաջացնում հայ աշխատավորության մեջ։

1921 թ. հունվարին Բաքվի կուսակցական ժողովում Գ. Օրջոնիկիձեն վերլուծում է այն դժվարին կացությունը, որի մեջ գտնվում էր Սովետական Հայաստանը։ Նա Բաքվի պրոլետարիատին կոչ է անում նախաձեռնել Հայաստանի աշխատավորությանն օգնության հասնելու շարժում, նշելով, որ առանց դրա Հայաստանի կոմկուսը միջազգային ու ներքին տվյալ պայմաններում միայնակ չի կարող Հայաստանը դուրս բերել ստեղծված անելանելի վիճակից։ «Եվ մեր բոլոր ուժերն ու եռանդը,— ասում է Գ. Օրջոնիկիձեն,— այն ամենով, ինչով որ հնարավոր է, հատկապես մարդկանցով, պարենով պետք է օգնություն հասցնենք Հայկական Սովետական Հանրապետությանը, ինչ էլ որ լինի պետք է փրկել բովանդակ հայ ժողովրդին, որը դաշնակցականների նկատմամբ հավատը կորցրել է և համոզվել, որ դաշնակցականները նրան տանում են միայն դեպի կործանում։ Պետք է անպայման փրկել այդ ժողովրդին։ Այդ ժողովուրդն իր ամբողջ բախտը վստահում է կոմունիստական կուսակցությանն ու սովետական իշխանությանը և դիմում է ոչ միայն Հայաստանի կոմունիստական կուսակցությանը, այլև Սովետական Ադրբեջանի կոմունիստական կուսակցությանը։ Դժբախտ հայ ժողովրդի նկատմամբ հոգատարության պարտքն ընկած է Ռուսաստանի կոմունիստական կուսակցության և 3-րդ կոմունիստական ինտերնացիոնալի վրա։ Եվ մենք ինչ գնով էլ լինի պետք է օգնենք նրանց»[30]։ Գ. Օրջոնիկիձեն խոշոր դեր կատարեց Հայաստանին տնտեսական օգնություն կազմակերպելու գործում, որն առանձին լուսաբանման առարկա է։ Հայտնի է, որ նա նաև Լոռվա գյուղացիության ապստամբության ոգին էր, նրա շերմ պաշտպանը։ Գ. Օրջոնիկիձեն, որն ամբողջ էությամբ կապված էր Կովկասի աշխատավորների հետ, շատ մոտ էր կանգնած նաև հայ մասսաներին, խորն էր թափանցում նրանց ծանր և անելանելի վիճակի մեջ, արձագանքում էր նրանց ցավերին, հավատում այդ մասսաների հեղափոխական հնարավորություններին։

Դաշնակցականների 1921 թ. փետրվարյան ավանտյուրայի ժամանակաշրջանում խստիվ անհրաժեշտ է դառնում Գ. Օրջոնիկիձեի ներկայությունը։ 1921 թ. ապրիլի 17-ին Գ. Օրջոնիկիձեն ժամանում է Երևան։ Նա առաջին հերթին զբաղվում է Հեղկոմի և Կենտկոմի անդամների փոխհարաբերությունների հարցերով, իրեն հատուկ ուղղամտությամբ ու սկզբունքայնությամբ համոզում և գործի է լծում աշխատողներին։ Ապրիլի 19-ին Գ. Օրջոնիկիձեն հանդես է գալիս Երևանի կուսակցական, սովետական և արհեստակցական կազմակերպությունների ներկայացուցիչների միացյալ ժողովում։ Այդ ելույթում նա վերլուծում է Հայաստանում սովետական իշխանության հաստատման ժամանակաշրջանի դժվարությունները, դաշնակցականների փետրվարյան ավանտյուրայի հետևանքները և շարադրում Հայաստանի կոմունիստական կուսակցության և աշխատավորության խնդիրները՝ քայքայված Հայաստանը վերականգնելու ասպարեզում։ Նա հատկապես աշխատանքի է կոչում հայ մտավորականությանը։ «Հայ ինտելիգենցիան,— ասում է Գ. Օրջոնիկիձեն,—

---

29 Նույն տեղում, գ. 35, թ. 3։

30 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 33, գ. 1070, թ. 2։

տրեխավոր գյուղացու և աշխատավոր բանվորի զավակն է, նա հանցավոր կլինի, եթե չգա ծառայելու նրա բանվորագյուղացիական իշխանությանը... Մեզ այժմ մնում է մի բան միայն անել, բարձրացնել ու պատշաճ աստիճանի վրա դնել Հայաստանի քայքայված արդյունարերությունն ու էկոնոմիկան. Այդ բանի համար ամբողջ ինտելիգենցիան և այլ ուժերը պիտի ծառայեն իրենց ժողովրդին»[31]։

1921 թ. նոյեմբերին Գ. Օրջոնիկիձեն, շնորհավորելով Հայաստանում սովետական իշխանության տարեդարձը, գրել է. «Փառք Հայաստանի ապրստամբած և հաղթանակած բանվորներին և գյուղացիներին, թող ապրի, աճի և ամրապնդվի Հայաստանի սովետական իշխանությունը։ Այսօր իրականացել է Գ. Օրջոնիկիձեի փայփայած ցանկությունը. Սովետական Հայաստանը ապրել, աճել և բարգավաճել է։ Հայաստանի բանվորները, գյուղացիները և մտավորականությունը, բովանդակ հայ ժողովուրդը, սիրում և իրենց սրտում վառ են պահում Գ. Օրջոնիկիձեի պայծառ ու անբիծ անունը, նրա լուսեղեն կերպարը։

РОЛЬ Г. К. ОРДЖОНИКИДЗЕ В ПОБЕДЕ И УПРОЧЕНИИ СОВЕТСКОЙ ВЛАСТИ В АРМЕНИИ

САМВЕЛ АЛИХАНЯН

Резюме

В 1918—1919 гг. будучи чрезвычайным комиссаром Совнаркома РСФСР на юге России, Г. Орджоникидзе внимательно следил за развитием событий в Закавказье. В 1920 г. Г. Орджоникидзе— председатель Кавказского бюро РКК(б) и уполномоченный правительства РСФСР— непосредственно руководит делом победы и упрочения Советской власти в Закавказье. Все революционные события, происходившие в Армении в это время, тесно связаны с именем Г. Орджоникидзе. Велики его заслуги в установлении Советской власти в Армении, в спасении армянского народа от физического уничтожения. После установления Советской власти в Армении Г. Орджоникидзе развернул кипучую деятельность по оказанию материальной и морально-политической помощи армянскому народу, по укреплению Советской власти.

31 «Կոմունիստ», 22. IV. 1921։